Կարգապահական գործ թիվ ԿԳ-15100

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 348-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/209-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԵՎԱԿ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Հարություն Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սևակ Նազարյանին (արտոնագիր թիվ 1237) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Սևակ Նազարյանն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիս և հունիս ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

20.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 224-Ա/ԿԳ-15100 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սևակ Նազարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

21.07.2015թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը՝ 18:45-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. **<u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

2015 թվականի հոկտեմբերի 16-ին էլեկտրոնային փոստի միջոցով Պալատում

ստացվել է փաստաբան Սևակ Նազարյանի մոր՝ Սվետլանա Վարդանյանի դիմում-նամակը, որով տիկին Վարդանյանը հայտնել է, որ ողնաշարի բարդ տրավմայի հետևանքով Սևակ Նազարյանը մոտ մեկուկես տարի առաջ վերականգնողական բուժման նպատակով մեկնել է ՌԴ: Ըստ տիկին Վարդանյանի, Սևակ Նազարյանը տվյալ պահին գտնվում է ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Ժելեզնովոդսկ քաղաքում, որտեղ և ստանում է համապատասխան բուժումը: Ինտենսիվ-թերապևտիկ բուժման կուրսը կազմում է 2 տարի և այդ ընթացքում Սևակ Նազարյանը գտնվում է անաշխատունակ վիճակում և հնարավորություն չունի զբաղվել մասնագիտական գործունեությամբ: Իրենց ընտանիքում զբաղված միակ անձը միայն տիկին Վարդանյանն է և հետևաբար վաստակը չի բավականացնում վճարել այդ թվում որդու փաստաբանական գործունեության իրականացման համար Պալատին վճարվող անդամավճարը: Դիմումով փաստաբան Սևակ Նազարյանի մայրը Պալատին խնդրել է ըմբռնումով մոտենալ որդու առողջական խնդրին և ներողամիտ գտնվել, հնարավորություն տալ անդամավճարների գոյացած պարտքը վճարել 6 ամսվա ընթացքում:

Կարգապահական նիստին փաստաբան Սևակ Նազարյանը չէր ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Սևակ Նազարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 15.11.2011թ. (հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 15.10.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Սևակ Նազարյանն ունի 10.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիս և հունիս ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Սևակ Նազարյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.10.2015թ., 30.11.2015թ. և 15.12.2015թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքներով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 27.11.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Սևակ Նազարյանի (արտոնագիր 1237, ստացված՝ 15.10.2011թ.) նկատմամբ 2011-2015թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով, որը Պալատի Խորհրդի 28.09.2015թ. թիվ ԿԳ/101-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն): Տույժը չի մարվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սևակ Նազարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Սևակ Նազարյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով:

Անդրադառնալով փաստաբանի մոր՝ Սվետլանա Վարդանյանի դիմումում նշված հանգամանքներին, Խորհուրդը արձանագրում է, որ բացակայում են իրավական հիմքերը դիմումում նշված հանգամանքների ուժով փաստաբան Սևակ Նազարյանի նկատմամբ բացառություն կիրառելու համար: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ Սևակ Նազարյանը շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Սևակ Նազարյանին (արտոնագիր թիվ 1237) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Սևակ Նազարյանի (արտոնագիր թիվ 1237) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սևակ Նազարյանին:***
4. ***Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու***

օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Մարտուն Փանոսյան**